ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մարտի 2021 թվականի N 74-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տարածքային կառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի՝ **որոշում եմ.**

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի վարչակազմակերպական կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Աբովյանի ծննդատուն» պետական փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի վարչակազմակերպական կառուցվածքը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի վարչակազմակերպական կառուցվածքը՝ համաձայն N 3 հավելվածի,

4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի վարչակազմակերպական կառուցվածքը՝ համաձայն N 4 հավելվածի,

5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Չարենցավանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի վարչակազմակերպական կառուցվածքը՝ համաձայն N 5 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

2021 թվականի մարտի 12
ք. Հրազդան